ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2022 թվականի օգոստոսի 19-ի թիվ 1-1 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/4

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև (գնահատող հանձնաժողովի արձանագրությունը կցվում է) ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2022 թվականի օգոստոսի 19-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2022 թվականի օգոստոսի 19-ին տրամադրված պարզաբանումները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նարինե Նիկոլայանին:

Հեռախոս՝ 011 821 621:

Էլեկտրոնային փոստ՝ tender4@minurban.am:

Արձանագրություն N 1-1

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/4 ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

19.08.2022թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Հ. Գինովյան
	Ա. Հակոբյան
	Ն. Փինաչյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Նիկոլայան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Աշ. Գրիգորյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցադրումների և պարզաբանումների մասին

(Ա. Միրզոյան)

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի վերաբերյալ 2022 թվականի օգոստոսի 19-ին ստացվել են հետևյալ հարցադրումները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովը տրամադրել է հետևյալ պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Ծավալաթերթում տրված է՝

974.Մետաղական պաշտպանող հերմետիկ զրահապատ դռների տեղադրում և արժեքը /ըստ նախագծի/

975.Մետաղական պաշտպանող հերմետիկ դռների տեղադրում և արժեքը /ըստ նախագծի/, իսկ նախագծում՝ միայն չափերն են տրված, չկան պահանջներ, ինչպիսին են լինելու այս դռները:

Պարզաբանում N 1

Անհրաժեշտ է հիմք ընդունել նախագծում առկա տեղեկատվությունը, ինչքանով, որ այն առկա է և առաջնորդվել դրանով:

Հարցադրում N 2

Ծավալաթերթում տրված է՝

536.Գազի հաշվիչների տեղադրում G-6, մետաղական արկղով, էլեկտրոնային ճշտիչով - բայց G-6 էլեկտրոնային ճշտիչով չի լինում

602.Սառնարանային պահարան սառցախցիկով 750x700x2100մմ N=0,32կվտ, 220Վ, 800լ. /1$/ - 800լ-ոց սառնարանները ներկառուցված սառցախցիկ չեն ունենում:

Պարզաբանում N 2

Նախագծով նախատեսված նշված բնութագրով սարքավորումներ առկա են և անհրաժեշտ է առաջնորդվել ներկայացված պահանջներով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6 դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամներ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Հ. Գինովյան

---------- Ա. Հակոբյան

---------- Ն. Փինաչյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան